different levels of education. On the other hand, in the Republic of Armenia there has been a transition to universal inclusion at all levels of education, and all this raises questions.

1. How ICT is used to work with preschool children?

2 . How do they affect the overall development of preschoolers?

These questions are at the center of attention of many modern researchers who consider them from psychological, medical, technical and pedagogical points of view.

Purpose. The aim of our research is to develop and test an electronic web system that can be used in the process of ensuring the general development of preschoolers.

Research novelty. In order to make the interaction between the child and the teacher more interesting, interactive, has developed an electronic web-based system to support the overall development of preschool children, unique of its kind in the Armenian reality, easy to use and provides high efficiency.

Keywords: preschool education, information and communication technologies, general development, ICT tools, education, upbringing.

References:

1. Bespalko V.P. (2002). Education and training with the participation of computers (pedagogy of the third millennium). M.: Ed. NPO "MODEK", 352 p.
2. Vasilieva E.A. (2011). The role of the teacher in the formation of the information space of the preschooler / E.A. Vasilyeva // Management of a preschool educational institution. No. 9, 96 p.
3. Kalash I. (2011). Possibilities of information and communication technologies in preschool education: an analytical review / I. Kalash. M.: UNESCO Institute for Information Technologies in Education, 176 p.
4. Smirnov A.V. (2005) Technical means in teaching and upbringing of children / A.V. Smirnov. M.: Academy, 230 p.
5. Effective Classroom Practice: Preschoolers and Kindergarteners. [online]. Technology and Young Children. National Association for the Education of Young Children – Promoting excellence in early childhood education, 2012. https://www.naeyc.org/resources/topics/technology-and-media/preschoolers-and-kindergartners [accessed Mar 17 2021].
6. Mohammad Mona and Heyam Mohammad (2012). Computer integration into the early childhood curriculum. Education. Vol-ume 133, No. 1, pp. 97-116.
7. Young K. S. and Nabucco de Abreu C., (2011). Internet addiction: A handbook and guide to evaluation and treatment. John Wiley & Sons, Hoboken, New Jersey, p 314.

Материал был представлен и отправлен на рецензию: 18.03.2021
Принято к публикации: 03.05.2021
Рецензент: канд пед. наук, доцент Лусине Айрапетян

The material was submitted and sent to review:18.03.2021
Was accepted for publication: 03.05.2021
Reviewer: Assoc. Prof., PhD. Lusine Hayrapetyan

373.31.02

ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Եգանյան Գայանե
ՀՊՄՀ, Հայաստան
Քիլէրճեան Պէթի
ՀՊՄՀ, Հայաստան

Համառոտ ներածական: 21-րդ դարի արժեքների ընկալումները տանում են դեպի գլոբալիզացիա: Այսօր մեդիան ներխուժել է մեր կյանքի բոլոր ոլորտներ: ԶՀՄ-ները դեռ վաղ մանկությունից անբաժանելի դեր են խաղում երիտասարդների կյանքում:

Անկարելի է հերքել մեդիայի տեղեկատվական, դաստիարակչական, ուսուցողական դերը երեխայի աշխարհայացքի, բարոյական արժեքների ձևավորման և զարգացման գործում։

Անառարկելի է, որ տեղեկատվական ներկայիս ժամանակաշրջանում կրտսեր դպրոցականի դաստիարակության, մտածողության զարգացման, աշխարհընկալման ձևավորման ամենահզոր միջոցներից մեկը մեդիան է։ Այս իմաստով մեդիան նույնիսկ կարող է դառնալ կրթության հուսալի դաշնակից՝ հանդես գալով իբրև արտաքին աշխարհի հետ բացվելու աղբյուր։

Ժամանկակակից դպրոցը պետք է այսուհետ սովորեցնի երեխաներին, թե ինչպե՞ս վերահսկել մեդիայի լեզուն և ինչպե՞ս դառնալ մեդիայի ակտիվ ու տեղեկացված օգտագործողներ կրթության ոլորտում։

Մեդիան սկսել է մեծ ազդեցություն թողնել երեխաների հայացքների ձևավորման վրա։ Այս տեսանկյունից հենց տարրական դպրոցից պետք է սկսել մեդիակրթության կիրառման համար պահպանել համապատասխան մանկավարժական պայմաններ՝ միտված երեխաների առողջության, անվտանգության վարքականոնի ձևավորմանը, նրանց սոցիալականացմանը, թիրախային դարձնելով այս գործընթացում ուսուցիչ-ծնող համագործակցության ստեղծումն ու պահպանումը։

Շատ ուսուցիչներ օգտագործում են մեդիան՝ իրենց դասերի արդյունավետությունը բարձրացնելու համար, ուստի կարելի է օգտվել մեդիայի ընձեռած հնարավորություններից՝ պատրաստելու անձնային բարձր որակներով օժտված քաղաքացիներ և հասարակության լիարժեք անդամներ։

Բանալի բառեր՝ Մեդիակրթություն, մեդիագրագիտություն, տարրական դպրոց, կրտսեր դպրոցական, մեդիակոմպետենացիա։

Հիմնախնդիրը՝ Ուսումնասիրության հիմնախնդիրն է հետազոտել տարրական դպրոցում մեդիակրթության հիմնահարցը և մշակել տարրական դպրոցի ուսուցչի մեդիակոմպետենցիաների մոդել։

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն՝ Մեր աշխատանքում մեթոդաբանական հիմք են հանդիսացել Ա. Թոփուզյանի, Ջ. Գյուլամիրյանի, Ս. Ասատրյանի, Լ. Պողոսյանի, Ն. Կարապետյանի, Լ. Ավագյանի՝ տարրական դպրոցում մեդիակրթության հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրությունները, Ա. Մանուկյանի և Հ. Մուրադյանի՝ մեդիակրթության տեսական դրույթները, ինչպես նաև Ա. Թոփուզյանի, Ջ. Գյուլամիրյանի, Ս. Ասատրյանի, Լ. Պողոսյանի, Լ. Անտոնյանի, Մ. Ղազարյանի՝ տարրական դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների անհրաժեշտության և կիրառության վերաբերյալ տեսական հիմնավորումները, նաև մի շարք արտասահմանյան տեսաբանների տեսական հիմնավոր վերլուծություններ ու մանկավարժական հայացքներ։

Հոդվածի նպատակը՝ Հոդվածի նպատակը տարրական դպրոցի մեդիագրագետ ուսուցչի կոմպետենցիաների մոդելի առաջադրումն է, որը մեթոդական աջակցություն է տարրական դպրոցի մանկավարժների համար։

Հետազոտության նորույթը՝ Տարրական դպրոցի մեդիագրագետ ուսուցչի կոմպետենցիաների առաջադրված մոդելը նպաստում է առավել արդյունավետ դարձնել մանկավարժական գործընթացը, բարձրացնել կրթության որակը տարրական դպրոցում, ակտիվացնել կրտսեր դպրոցականի բոլոր զգայարանները (պատկերավոր, ձայնային և այլն)։

Մեդիակրթությունը կրտսեր դպրոցականին սովորեցնում է տարբերակել ճիշտ և գրագետ մեդիա տեղեկույթը սխալից, ինչպես նաև մեդիան օգտագործել տեղեկատվու-

թյուն փնտրելու և գտնելու նպատակով, դառնալ մեդիա ստեղծող՝ բարձրացնելով ուսումնառության որակը:

Այս իմաստով մեր թեման արդիական է. վերոնշյալը իր նպաստը կբերի տարրական դպրոցում մեդիագրագետ ուսուցչի անհրաժեշտ մոտեցմամբ մանկավարժական արդյունավետ գործընթացի կազմակերպմանը:

Հիմնական նյութի շարադրանքը: «Մեդիա» եզրույթը փոխառվել է լատիներենից (media կամ medium), ինչը նշանակում է «միջոց», «հնար», «եղանակ», «միջնորդ»: Այս համայնապատկերում մեդիատեքստ կամ մեդիափաստաթուղթ կարող է համարվել տեղեկատվություն փոխանցող և տարածող յուրաքանչյուր կրիչ՝ սկսած անտիկ ժայռապատկերներից, հին մագաղաթներից, ավանդական գրքերից, արվեստի ստեղծագործություններից մինչև տեխնիկական առաջընթացի արդյունքում ստեղծված, գերժամանակակից տեխնոլոգիակները [3, էջ 43]:

Մեդիայի հաղորդած հաղորդագրությունները չեզոք չեն: Նրանք հատուկ թիրախների նպատակ ունեն, հատուկ լեզու և ճշգրիտ արվեստագիտական (technology) գործիքներ:

Մեդիակրթությունը մի շարք միջոցների կիրառմամբ ուղղված է յուրաքանչյուր աշակերտի անհատականության զարգացմանը նպաստելուն և երեխաներին օգնելուն՝ իրենց գիտելիքները ամրապնդելու, հասարակության մեջ ակտիվ դերակատարություն ունենալուն:

«Եվրախորհրդի փաստաթղթերում, որի անդամ է նաև Հայաստանը, մեդիակրթությունը սահմանվում է որպես ուսուցում, որը զարգացնում է տեղեկատվական մտահասությունը: Այն ենթադրում է տեղեկույթի տարբեր աղբյուրների՝ գրքեր, տեղեկատուներ, հանրագիտարաններ, բառարաններ, քարտեզներ, լրատվական տարբեր կայքեր, տեղեկատվական սարքերի (հեռուստացույց, հեռախոս, ֆաքս, համակարգիչ, տպիչ և այլն), ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների (տեսաձայնագրություններ, էլեկտրոնային փոստ, զանգվածային լրատվամիջոցներ, համացանց և այլն) օգնությամբ անհրաժեշտ տեղեկույթն ընտրելու, մշակելու, պահպանելու և հաղորդելու կարողություններ» [5, էջ 82-83]:

Տարրական դպրոցում մեդիակրթությունը կենսական նշանակություն ունի: «Տարրական դպրոցում մեդիակրթության հիմնական նպատակը ժամանակակից տեղեկատվական անսահմանափակ տարածքում ապրելու և բազմաբնույթ գործունեություն ծավալելու, մեդիամշակույթի տիրույթում բարեվարքության կանոնների հաշվառմամբ հաղորդակցական շփումներ իրականացնելու կարողությունների ձևավորումն է, ինչպես նաև քննադատական մտածողության, մեդիատեղեկույթը մեկնաբանելով, վերլուծելով ու գնահատելով ընկալելու, մեդիամիջոցներով ինքնադրսևորման, ինքնագնահատման տարրական ունակությունների յուրացումն է» [1, էջ 43]:

Հիմնախնդրի բացահայտման նպատակով իրականացրել ենք հետազոտություն Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 50 ուսանողների հետ: Հետազոտության նպատակն էր պարզել ապագա մանկավարժների մեդիագրագիտության մակարդակը:

Ստորև ներկայացնում ենք հարցաթերթային հարցման ուսումնասիրությունների արդյունքները:

- Հետևյալ հարցին, թե ի՞նչ է մեդիակրթությունը և ի՞նչ դեր ու նպատակ ունի այն տարրական դպրոցում, պատասխանել են.



Գծապատկեր 1. Մեդիակրթության նշանակությունը տարրական դպրոցում

Ուսանողների մեծամասնությունը այն կարծիքին է, որ մեդիակրթությունը տեղեկատվական նոր պայմանների մեջ ապրելուն պատրաստելն է, իսկ ահա տարրական դպրոցում այն պայմանավորված է մանկավարժի պատրաստվածութեամբ, դասարանի ժամանակակից տեխնիկայի կահավորմամբ:

Այստեղ նշենք, որ մեդիակրթությունը մեդիայի միջոցով նոր գիտելիքների, ձեռքբերման կարողության մշակումն է: Ժամանակակից աշխարհում մեդիան ունի մեծ ազդեցություն կրթության վրա, և այդ ազդեցությունը պետք է դարձնել կառավարելի և ուղղորդված: Այն սովորեցնում է անհատներին տեղեկույթը մեկնաբանել և ստեղծել, ընտրել իրեն ամենահարմար ու ամենամատչելի միջոցը հաղորդակցման համար՝ օգտագործելով նաև ժամանակակից ՏՏ տեխնիկան:

- Հետևյալ հարցին, թե ովքեր են մեդիակրթության կիրառման դրական և բացասական կողմերը տարրական դպրոցում, պատասխանել են.





Գծապատկեր 2. Մեդիակրթության կիրառման դրական և բացասական կողմերը՝ ըստ ուսանողների

Ողջունելի են ուսանողների կողմից տրված պատասխանները, սակայն նրանք անխտիր ներկայացրել էին միայն մեկ դրական և միայն մեկ բացասական կողմ: Մեդիակրթության կիրառությունը ունի բազմաթիվ դրական ու բացասական կողմեր, որոնք մինչ կիրառելը մանկավարժը պետք է ուսումնասիրի դրանք և ըստ այդմ ընտրի լավագույն տարբերակը, որը պիտի գոհացնի յուրաքանչյուր աշակերտի հետաքրքրությունն ու պահանջմունքը:

• Հետևյալ հարցին, թե մեդիակրթության կիրառելը կարող է փոխարինել ավանդական դասագործընթացին, պատասխանել են.

Գծապատկեր 3. Մեդիակրթության փոխարինումը ավանդական դասագործընթացի հետ

Ողջունելի է ուսանողների այն պատասխանը, որ մեդիակրթության կիրառումը մասամբ կարող է փոխարինել ավանդական դասագործընթացին. այստեղ պետք է նշել, որ մեդիակրթությունը ավանդական դասագործընթացին զուգահեռ պետք է ընթանա:

• Հետևյալ հարցին, թե մեդիակրթության որ տեսակներն են առավել նպատակահարմար տարրական դպրոցում, պատասխանել են.

Գծապատկեր 4. Մեդիակրթության նպատակահարմար տեսակները տարրական դպրոցում

Մտահոգիչ են ուսանողների պատասխաններն այն առումով, որ նրանց 44 %-ը տեղյակ չէ, թե որոնք են տարրական դպրոցում մեդիակրթության առավել նպատակահարմար տեսակները, իսկ մնացյալը պատասխանել է, որ տեսասահիկներնն ու մուլտիֆիլմերն են նպատակահարմարը: Նշենք, որ մեդիակրթության կիրառման տեսակները բազմազան են տարրական դպրոցում՝ պայմանավորված դասի նպատակով, խնդիրներով, վերջնարդյունքներով, օրինակ՝ կարելի է օգտագործել հեռուստատեսությունը, ռադիոն, վիդեոն, համացանցը, տեսասահիկը և այլն:

• Հետևյալ հարցին, թե որոնք են տարրական դպրոցի մանկավարժի կոմպետենցիաները մեդիակրթության հաջող օգտագործման համար, պատասխանել են.



Գծապատկեր 5. Դպրոցի մանկավարժի մեդիակոմպետենցիաները

Մտահոգիչ է այն փաստը, որ ուսանողները տեղյակ չէին, թե ինչ կոմպետենցիաներով պետք է օժտված լինի այսօրվա մանկավարժը, որպեսզի արդյունավետ կիրառի մեդիան դասապրոցեսի ընթացքում՝ հաշվի առնելով մեդիայի կիրառման այսօրվա հստակ ռազմավարական պահանջը:

Նրանց 36 %-ը կարևորում է, որ ուսուցիչը պետք տեղեկացված լինի ՏՀՏ-ներին, իսկ 24 %-ը ՏՀՏ-ների հետ աշխատելու կարողությամբ օժտվածությունն է կարևորում: Այստեղ փաստենք, որ ուսուցիչը պետք է օժտված լինի և գիտակցի մեդիատեքստի ստեղծման անհրաժեշտությունը, իրազեկ լինի մեդիայի տեսակներից, կարողանա մեդիան օգտագործել դասի տարբեր փուլերում ու նաև արտադասարանային պարապ-

մունքների և միջոցառումների ժամանակ, համագործակցի ծնողների հետ՝ մեդիադաշտից օգտվելու անվտանգ ձևեր գտնելու ուղղորդման և կիրառման հարցերում:

- Հետևյալ հարցին, թե ինչ քայլեր կառաջարկեն երեխաների համակարգչային կախվածության կանխարգելման համար, պատասխանել են.



Գծապատկեր 6. Ուսանողների առաջարկած քայլերը՝ երեխաների համակարգչային կախվածության կանխարգելման ուղղությամբ

Ցավալի է, որ ուսանողների 26 %-ը տեղյակ չէ, թե ինչպիսի քայլեր կարող է ձեռնարկել երեխաների համակարգչային կախվածության կանխարգելման ուղղությամբ: Նրանց 18 %-ը կարծում է, որ դա ծնողների պարտականությունն է, 14 %-ը առաջարկել է բացատրական աշխատանք իրականացնել՝ ներկայացնելով նրա լավ ու վատ կողմերը, իսկ 42 %-ը առաջարկել է հետաքրքիր զբաղմունքներ՝ խաղեր, շրջագայություն, ձեռքի աշխատանք, սպորտ և այլն, իսկ ահա 10 %-ը առաջարկել է երեխային արգելել համակարգչով զբաղվել, չնայած այսօր շատ դժվար է երեխային հեռու պահել մեդիայից և ՏՀՏ-ներից:

Այստեղ նշենք, որ շատ կարևոր է ծնող-ուսուցիչ փոխհամագործակցությունը. երկու կողմերը աշխատանք պետք է իրականացնեն վերահսկողություն սահմանելու տեսանկյունից: Յուրաքանչյուր կողմը իր պատասխանատու աշխատանքը պետք է կատարի, որ երեխան անվտանգ շփում ունենա մեդիա հարթակում, այստեղ անհրաժեշտ է լավ ճանաչել երեխային, նրա հետաքրքրությունները, որպեսզի կարողանանք հեռու պահել սխալ և «վտանգավոր» համակարգչային խաղերից՝ ուղղորդելով դեպի նոր, դաստիարակող, բարոյականը սերմանող, ազգային արժեքները պահպանող խաղերով ու ֆիլմերով ժամանցին, փորձել սակավեցնել համակարգչով զբաղվելու ժամերը՝ փոխարենը այն օգտագործելով ըստ անհրաժեշտության և նպատակի:

Ուսուցչի մեդիակոմպետենցիաները վերաբերում են ուսուցչի համար անհրաժեշտ մեդիայի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին: Մեդիակոմպետենցիաների կարևորումը նպատակուղղված է կարողություններին, որոնք ուսուցիչները պետք է ունենան մեդիակրթության և մեդիատեխնոլոգիաների հաջող օգտագործման և ներդրման համար: «Ապագա մանկավարժները պետք է մեդիագրագետ լինեն, այսինքն՝ կարողանան որոնել, գտնել, մշակել տեղեկատվությունը, ադապտացնել և մեկնաբանել այն՝ այլ հասցեատիրոջ (աշակերտին) փոխանցելու համար» [2, էջ 51]:

Այսօրվա ուսուցիչը գիտակցում է ՏՀՏ-ների կիրառության նշանակությունը կրթական գործընթացում, սակայն դժվար է այն հաջողությամբ կիրառել դպրոցում որոշակի պայմանների բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, ուսուցիչը պետք է ունենա և՛ մեդիատեխնոլոգիաները կիրառելու կոմպետենցիաներ, և՛ նաև այդ կոմպետենցիաների գործնական կիրառման միջավայր. «ամեն ինչ որոշվում է ուսուցչի անձով և նրա անձնական դրդումներով, այլ ոչ թե տեխնիկայի քանակությամբ և

տեսքով, և երկրորդ եզրակացությունը՝ դպրոցում անհրաժեշտ է ստեղծել հատուկ պայմաններ, որպեսզի առարկայի ուսուցիչը ցանկություն հայտնի և կարողանա կիրառել համակարգչային տեխնիկան իր մանկավարժական գործունեության ընթացքում» [4, էջ 84]:

Մեր կողմից իրականացված տեսական և հետազոտական ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա առաջադրել ենք տարրական դպրոցի մեդիագրագետ ուսուցչի կոմպետենցիաների մոդելը Տարրական դպրոցի մեդիակրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման տարրական դպրոցի մեդիագրագետ ուսուցչի կոմպետենցիաների մոդելը ներկայացված է որպես աջակցություն տարրական դպրոցի ուսուցիչներին կրթական նոր միջավայրի, մեդիահմտությունների, մեդիագործիքների կիրառման առումով, որը հնարավորություն կտա մանկավարժներին ամբողջացնելու իրենց մեդիակրթադաստիարկչական գործունեությունը:



Եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ: Մեր կատարած փորձարարական հետազոտությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. 21-րդ դարի գլոբալացված կրթական շրջանակները տարրական դպրոցում ուսումնական գործընթացը ՏՀՏ-ների ներդրմամբ կազմակերպելը հանձնարարական է և կրթության մարտահրավերներին դիմակայելու նախապայման՝ ի նպաստ տարրական դպրոցի մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման:

2. Տարրական դպրոցում անբավարար են տեխնիկական, մեդիահագեցվածությունը, նաև ուսուցիչների մեդիակոմպետենցիաների տիրապետումը. դասի թեմային և առանձնահատկություններին համապատասխան ժամանակակից ՏՀՏ-ների իմացությունը, ճիշտ մեդիատեսակի ընտրությունն ու կիրառումը անհրաժեշտություն են:

3.Տարրական դպրոցի ապագա ուսուցիչները գիտակցում են մեդիակրթության դերը և անհրաժեշտությունը աշակերտների կրթադաստիարակչական գործընթացում, սակայն մեդիակոմպետենցիաների իմացության և դրսևորման առումով անհրաժեշտ է իրականացնել որակավորման ու վերարտակավորման աշխատանքեր:

4. Տարրական դպրոցի մեդիագրագետ ուսուցչի՝ մեր մշակած կոմպետենցիաների մոդելը ամբողջացնում է մեդիակարողությունները, մեդիագործիքների իմացությունն ու կիրառումը ուսուցման ակտիվ մեթոդների հետ միասին հնարավորություն կտան կրթական նոր միջավայրում տարրական դպրոցի ուսուցչին մանկավարժական գործընթացը դարձնելու առավել արդյունավետ:

Օգտագործած գրականության ցանկ

1. Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. Հ., Ասատրյան Ս. Մ., Պողոսյան Լ. Մ., Կարապետյան Ն. Զ., Ավագյան Լ. Մ., Մեդիակրթությունը տարրական դպրոցում, Ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների և ծնողների համար, Երևան, «Մանկավարժ» հրատ., 2019, 140 էջ:
2. Մանկավարժական կրթության հայեցակարգ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Գիտահետազոտական կենտրոն, Երևան, 2014, 84 էջ:
3. Մանուկյան Ա. Մ., Մուրադյան Հ. Ս., Մեդիակրթություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների, ասպիրանտների, մեդիամանկավարժների, մեդիահոգեբանների և մեդիասպառողների համար, Երևան, «Զանգակ» հրատ., 2017, 272 էջ:
4. Սողոյան Ս., Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը ուսուցիչների պատրաստվածության գործընթացում, «Մանկավարժական միտք», 1-2, 2011, «Զանգակ» հրատ., 272 էջ:
5. Տիգրանյան Ն., Փիլոյան Ա., Մեդիակրթության տարրերի կիրառումը ֆիզիկայի ուսուցման գործընթացում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 2019/N1, 214 էջ:

МЕДИАОБРАЗОВАНИЕ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Еганян Гаяне

Государственный педагогический университет Армении, Армения

Килерджян Бетти

Государственный педагогический университет Армении, Армения

Аннотация

Ценностные представления XXI века ведут к глобализации, а СМИ сегодня вторглись во все сферы нашей жизни. СМИ играют неотъемлемую роль в жизни молодых людей с раннего возраста. Нельзя отрицать информационную, образовательную и обучающую роль СМИ в развитии мировоззрения и нравственных ценностей ребенка.

Бесспорно, что в нынешнюю информационную эпоху одно из самых мощных средств воспитания ученика начальной школы, развития его мышления и формирования его мировоззрения являются

СМИ. В этом смысле СМИ могут стать надежным союзником образования, выступая в качестве источника открытости для внешнего мира.

Современная школа теперь должна вооружить учащихся соответствующими знаниями и навыками, учить детей, как контролировать язык средств массовой информации, как стать активными, информированными пользователями образования.

СМИ начали оказывать большое влияние на формирование взглядов детей, поэтому необходимо начать создание соответствующих педагогических условий для использования медиаобразования, начиная с начальной школы, направленного на формирование здорового и безопасного поведения детей, на их социализацию, путем взаимодействия учителей и родителей.

Многие учителя используют СМИ для повышения эффективности уроков, а возможности, предоставляемые СМИ, можно использовать для подготовки полноправных членов общества с высокими личностными качествами.

Ключевые слова: медиаобразование, медиаграмотность, начальная школа, младший школьник, медиакомпетентность.

Список использованной литературы

1. Топузян А. О., Гюламирян Дж. Х., Асатрян С. М., Погосян Л. М., Карапетян Н. З., Авагян Л. М., Медиаобразование в начальной школе, Учебно-методическое пособие для учителей и родителей. Ереван, издательство «Педагог», 2019, 140 стр.
2. Концепция педагогического образования, Х. Армянский государственный педагогический университет им. Абовяна, Научный центр, Ереван, 2014, 84 стр.
3. Манукян А. М., Мурадян Г. С., Медиаобразование, Учебно-методическое пособие для студентов, аспирантов, медиапедагогов, медиапсихологов и медиапользователей педагогических вузов, Ереван, Издательство «Зангак», 2017, 272 стр.
4. Согоян С., Использование новых информационных технологий в процессе подготовки учителей, «Педагогическая мысль», 1-2, 2011, издательство «Зангак», 272 стр.
5. Тигранян Нуне, Арменуи Пилоян, Применение элементов медиаобразования в процессе обучения физике, Научно-методические статьи «Мхитар Гош», 2019 / N1, 214 стр.

MEDIA EDUCATION IN THE PRIMARY SCHOOL

Eganyan Gayane
State Pedagogical University of Armenia, Armenia
Kilerjian Betty
State Pedagogical University of Armenia, Armenia

Summary

The values of the 21st century lead perceptions to globalization, today the media has invaded all spheres of our lives. The media play an integral role in the lives of young people from an early age. The informational, educational, educational role of the media in the development of the child's worldview and moral values cannot be denied.

It is indisputable that in the current information age one of the most powerful means of educating a primary school student, developing his thinking, and shaping his worldview is the media. In this sense, the media can even become a reliable ally of education, acting as a source of openness to the outside world.

The modern school must now teach children how to control the language of the media, how to become active, informed users of education.

The media has started to have a great influence on the formation of children's views. From this point of view, it is necessary to start preserving appropriate pedagogical conditions for the use of media education from primary school, aimed at developing children's health and safety behavior, their socialization, making the establishment and maintenance of teacher-parent cooperation in this process.

Many teachers use the media to increase the effectiveness of their lessons. Therefore, the opportunities provided by the media can be used to train citizens with high personal qualities and full members of society.

Keywords: Media education, media literacy, primary school, junior school child, media competence.

References:

1. Topuzyan A. O., Gyulamiryan J. H., Asatryan S. M., Poghosyan L. M., Karapetyan N. Z., Avagyan L. M., "Media Education in Elementary School" Educational-methodical manual for teachers and parents. Yerevan, "Pedagogue" publishing house, 2019, 140 pages.

2. Concept of Pedagogical Education, Kh. Abovyan Armenian State Pedagogical University, Research Center, Yerevan, 2014, 84 pages.
3. Manukyan A. M., Muradyan H. S., Media Education, Educational-methodical manual for students, postgraduates, media teachers, media psychologists and media users of pedagogical universities, Yerevan, "Zangak" publishing house, 2017, 272 pages.
4. Soghoyan S., "The Use of New Information Technologies in the Process of Teacher Training", Pedagogical Thought, 1-2, 2011, "Zangak" publishing house, 272 pages.
5 - Nune Tigranyan, Armenuhi Piloyan, The Application of Media Education Elements in the Physics Teaching Process, "Mkhitar Gosh" scientific-methodological articles, 2019 / N1, 214 pages.

Материал был представлен и отправлен на рецензию: 16.03.2021
Принято к публикации: 03.05.2021
Рецензент: канд. пед. наук, доцент Арменуи Ашикян

The material was submitted and sent to review:16.03.2021
Was accepted for publication: 03.05.2021
Reviewer: Assoc. Prof., PhD. Armenuhi Ashikyan

371.7

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ՝ ԸՍՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

Ղազարյան Ֆրունզ
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտ, Հայաստան
Խաչատրյան Սաթենիկ
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտ, Հայաստան

Համառոտ ներածական: Մեր երկրում, կրթական համակարգը նախատեսում է ոչ միայն սովորող երիտասարդության ուսուցումն ու դաստիարակությունը, այլև նրանց առողջության ամրապնդումն ու պահպանումը: Այս խնդիրն արտացոլված է արդի կրթության մեջ, որտեղ առաջնահերթ ուղղությունն աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորումն է:

Հիմնախնդիրը: Ներկայումս, սոցիալ-տնտեսական խնդիրներից ելնելով, սովորողների առողջական վիճակը մտահոգությունների տեղիք է տալիս, քանի որ աշակերտները բավարար չեն արժևորում սեփական առողջությունը և միշտ չէ, որ տիրապետում են առողջության ամրապնդմանն ու պահպանմանն ուղղված համապատասխան գիտելիքների, հմտությունների և սովորույթների: Մյուս կողմից, մշտապես աճում է ուսումնական բեռնվածությունը, իսկ աշակերտներն իրենց ազատ ժամանակի զգալի մասը հատկացնում են համակարգչային խաղերին: Այս և այլ գործոնները լուրջ վտանգ են ներկայացնում առողջության համար:

Առողջ ապրելակերպը գիտական հիմնավորում է ստացել 20-րդ դարի վերջին, երբ հստակ սկսեց դրսևորվել առողջության և ապրելակերպի միջև եղած փոխադարձ կապը [8]:

Ընդհանուր առմամբ «առողջ ապրելակերպը» բնութագրում է մարդու ճիշտ վարքագիծն առօրյա կյանքում՝ ուղղված սեփական առողջության պահպանմանը, ինչը պայման ու նախադրյալ է լիարժեք կյանքի համար [9, էջ 40-46], [3], [4], [6, էջ 231-234]: